ԱՍՏՂԵՐՆ ՈՒ ԱՐԵԳԱԿԸ

Մի անգամ աստղերը հավաքվեցին երկնքում: Նրանցից մեկն ասաց.

– Մենք շա՛տ շատ ենք: Ուրեմն ինչո՞ւ չենք կարող լուսավորել արեգակի ու լուսնի նման:

Ու որոշեցին համատեղ ուժերով արեգակին հեռացնել երկնքից: Սակայն հենց որ լուսինը հայտնվեց երկնքում, աստղերը գունատվեցին ու իրար ասացին.

– Մենք լուսնի լույսից որ այսպես աղոտացանք, հապա ի՞նչ կլինենք արեգակի լույսից: Ավելի լավ է՝ զուր տեղը չհպարտանանք:

ղ

կա
ուղի
արկ
եկ

սեղան
արկղ
օղակ
աղյուս
աղյուսակ

ղ ղ ղ ղ

ղուկասը ղեկավարում է նավը: